ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀՐԱՏԱՐԱԿՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N «ՀՀՄՆ-ԲԸԱՀԱՇՁԲ-17/15»

ք. Երևան «27» 03 2017 թ.

Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարությունը, ի դեմս նախարարության կանոնադրության հիման վրա գործող աշխատակազմի ղեկավար Ս. Մուրադյանի, (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, «Զանգակ-97» ՍՊԸ -ն, ի դեմս կազմակերպության կանոնադրության հիման վրա գործող տնօրեն՝ Ս. Մկրտչյանի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է գրականության հրատարակման աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետև՝ Աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Աշխատանքը կատարվում է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից կատարվող Աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե կատարվել է սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Աշխատանք.

ա) Պահանջել կատարելու մակետի (ազդօրինակի) հաստատման փուլում որոշակի հիմնավորված փոփոխություններ ձևավորման աշխատանքում:

բ) Չընդունել Աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Աշխատանքը սույն պայմանագրին համապատասխանող Աշխատանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

գ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Աշխատանքի համար վճարված գումարը և Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված Աշխատանքը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Աշխատանքի կատարման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան կատարված Աշխատանքի արդյունքը, իսկ Աշխատանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, **իսկ** Պատվիրատուի կողմից **սույն պայմանագրի 4.2 կետում** նշված ժամկետի խախտման դեպքում նաև **սույն** պայմանագրի 5.5 **կետով նախատեսված** տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Աշխատանքի և դրա փուլի կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Մինչև պայմանագրի կնքումը կարգավորել և Պատվիրատուին ներկայացնել գրքի հրատարակման հետ կապված հեղինակային իրավունքի տրամադրումը հաստատող հիմքերը. (պայմանագիր կամ նամակագրություն հեղինակի և թարգմանչի հետ):

2.4.3. Գրքի հանրայնացմանն ուղղված բոլոր միջոցառումներում. (շնորհանդես, հոբելյանական երեկո, մամուլի ասուլիս,մամուլի հաղորդագրություն և այլն) պարտադիր հրապարակել ՀՀ մշակույթի նախարարության կողմից ֆինանսավորված լինելու և պետական պատվերով հրատարակված լինելու հանգամանքը:

2.4.4. Պայմանագրի գործողության ժամկետի ավարտին հաջորդող 3 տարիների ընթացքում պատվիրատուի կողմից հավելյալ տպագրություն պատվիրելու դեպքում այն իրականացնել միայն տպագրական աշխատանքի համար պահանջվող արժեքով՝ բացառելով հրատարակչական մասը:

2.4.5 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը :

2.4.6 Սույն պայմանագրի կատարման (կանխավճարի) ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության (այսուհետ՝ արձանագրություն) ստորագրմամբ, իսկ պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ավարտի օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում կատարված Աշխատանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 5 (հինգ) օրինակ (Հավելված N 3) և պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 3.1):

3.1.1 Աշխատանքի փուլը Կատարողի կողմից ներկայացվում է Պատվիրատուի ընդունմանը ոչ ուշ, քան սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված ժամկետներում՝ Պատվիրատուին դրանից ոչ պակաս, քան 5 (հինգ) աշխատանքային օր առաջ ուղարկելով հրատարակության մակետը (ները) և կատարված Աշխատանքի փուլի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 5 (հինգ) օրինակ (Հավելված N 3) և Աշխատանքի փուլի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 3.1):

3.1.2 Աշխատանքն ամբողջությամբ Կատարողի կողմից ներկայացվում է Պատվիրատուի ընդունմանը ոչ ուշ, քան սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված վերջին ժամկետում՝ Պատվիրատուին ներկայացնելով տպագրված հրատարակության օրինակը (ները) և կատարված Աշխատանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 5 (հինգ) օրինակ (Հավելված N 3) և պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 3.1):

Ընդունմանը ներկայացվող Աշխատանքը համատեղ զննվում է Պատվիրատուի և Կատարողի ներկայացուցիչների մասնակցությամբ՝ Պատվիրատուի կողմից սահմանված ժամկետում և այն ընդունելու դեպքում Կատարողը իր միջոցներով Աշխատանքը հինգ աշխատանքային օրվա ընթացքում տեղափոխում և հանձնման-ընդունման արձանագրությամբ փոխանցում է «Գրքի և հրատարակչական գործի կենտրոն» ՊՈԱԿ-ին: Աշխատանքը «Գրքի և հրատարակչական գործի կենտրոն» ՊՈԱԿ-ին փոխանցելու հանձնման-ընդունման արձանագրության օրինակը ստանալուց հետո Պատվիրատուի ներկայացուցիչը 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և Կատարողին է փոխանցում Աշխատանքի հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը:

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե կատարված Աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցներ

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 5 (հինգ) օրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Աշխատանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի կատարման ենթակա Աշխատանքի ընդհանուր գինը կազմում է 6 265 000 **(վեց միլիոն երկու հարյուր վաթսունհինգ հազար**) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն : Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները, ընդ որում՝

Աշխատանքի կատարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.1.1 Պայմանագրի գնի 100 %-ը՝ 6 265 000 **(վեց միլիոն երկու հարյուր վաթսունհինգ հազար**) ՀՀ դրամը, Պատվիրատուն փոխանցում է Կատարողի բանկային հաշվին՝ որպես կանխավճար: Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Յուրաքանչյուր դեպքում նվազեցվող (կանխավճարի մարվող) գումարի չափը որոշվում է պայմանագրի ընդհանուր գնի նկատմամբ վճարվող գումարի համամասնությամբ:

4.2 Պատվիրատուն կատարված Աշխատանքի դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Աշխատանքի դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան՝ **2017 թ. դեկտեմբերի 20-ը**:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Աշխատանքի կատարման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Աշխատանք կատարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կամ դրա մի մասի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Աշխատանքը կատարելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

Արգելվում է սույն պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող Աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.4 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև սույն պայմանագրով այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

7.5 Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.6 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն, «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, ուղարկում է Կատարողի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և միաժամանակ նույն օրը հրապարակում է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետում նշված կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.7 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.8 Սույն պայմանագիրը կազմված է 13 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.9 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.10 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ մշակույթի նախարարություն	«Զանգակ-97» ՍՊԸ
Հասցեն՝ 0010, ք. Երևան, Վազգեն Սարգսյան փող.3	Հասցեն՝ ք. Երևան, Նոր-Նորքի 8-րդ զանգված,
Կառավարական տուն 2,	30 շ., 39 բն,
հեռ.՝ 58-51-96, 58-51-78	հեռ.՝ 23-25-28,
ՀՎՀՀ 08030202, հ/հ 900011012862	ՀՎՀՀ 00830786, հ/հ 001-040013-001
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչությունում	«Էյ-Էս-Բի-Սի Բանկ» ՓԲԸ
Ս. Մուրադյան	Ս. Մկրտչյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

ՀԱՎԵԼՎԱԾ N 1

«21» «03» 2017թ. կնքված

N «ՀՀՄՆ-ԲԸԱՀԱԵՁԲ-17/15» ծածկագրով գնման պայմանագրի

1-ին չափաբաժին

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Աշխատանքի անվանումը՝ Ռուբեն Գալչյան.

«Ադրբեջանական պատմաաշխարհագրական զեղծարարությունները»

NN	Աշխատանքի բնութագրի տարրերը	Նկարագրությունները
1	Գնվող աշխատանքի էության համառոտ շարադրանքը	Ներկա աշխատությունը քննարկում է այն պատմական, ազգագրական ու աշխարհագրական կեղծիքներն ու հորինումները, որոնք կիրառել են Ադրբեջանի պատմաբաններն ու աշխարհագրագետները, ընթացքում քննարկելով դրանց կիրառման միջոցներն ու դրդապատճառները: Աշխատությունում քննարկված և վերլուծված են ադրբեջանական պատմագիտության հիմնադիրների աշխատանքները, և թե ինչպես են դրանք փոփոխվում, աղավաղվում, երբ արդի Ադրբեջանի ակադեմիկոսներն ու գիտնականները դրանք վերծանում են լատինատառ ադրբեջաներենի, ընթացքում տեքստերից վերացնելով «Հայաստան» և «հայ» անվանումները:
2	Աշխատանքի համար անհրաժեշտ չափորոշիչների նկարագրությունը	**Ընդհանուր բնութագրիչներ՝ այդ թվում** Չափը՝ 70 x 100 1/16 Միջուկի չափը 170x240 մմ (+ - 1 սմ) Ծավալը՝ 14.0 տպագր. մամուլ (224 էջ), որից 3 մամուլը՝ ներդիր (48 էջ) Տպաքանակ՝ 400 օրինակ **Միջուկի թղթի բնութագրիչները՝ այդ թվում** Տեսակը՝ օֆսեթ Կշիռը՝ 80 գ/ք.մ Ճերմակության առավելագույն չափը՝ ISO 2470/%D65 ստանդարտով (առավելագույնը՝ 96%) Անթափանցելիության նվազագույն չափը՝ 90% (ISO2471) **Տեքստի բնութագրիչներ՝** Բուն տեքստի տառաչափը՝ 9-11 Միջտողային հեռավորությունը 1.1-1.5 Օգտագործվող տառատեսակը՝ Գրապալատ, Մաշտոց Ներդիրի գույների քանակը՝ 4/4 Ներդիրի թուղթը՝ 115 գ/մ², կավճապատ Շապիկը՝ N 4 Տպագրության տեսակը՝ օֆսեթ: Պահպանել լուսանցքների համար ընդունված չափանիշները:
3	Աշխատանքի որակական ցուցանիշները՝ հիմնված ՀՀ կողմից սահմանված տեխնիկական և որակական բնութագրերի (ստանդարտների) վրա	Հրատարակության տպագրությունը պետք է լինի որակյալ, վրիպակներից զերծ և համապատասխանի ГОСТ 4.482-87, 7.4-95,7.53-01, ՀՍՏ 311-09 չափանիշներին, Հրատարակության 1 տպագրական մամուլում (միջին հաշվով) վրիպակների քանակը՝ 3-ից ավելի լինելու դեպքում Պատվիրատուն իրավունք ունի հրաժարվել ընդունել այն:
4	Աշխատանքի հետ կապված այլ պահանջների և ընթացակարգերի հստակ նկարագրությունը	1. Աշխատանք կատարողը պատվիրատուին է ներկայացնում հրատարակության մակետը /ազդօրինակը/ 14.0 տպագրական մամուլ: 2. Հրատարակության անորակ օրինակները կատարողը վերահրատարակում է իր հաշվին՝ 10-օրյա ժամկետում:

Աշխատանքի կատարման ժամկետը

Աշխատանքի փուլը	սկիզբը	ավարտը
1 մակետ (ազդօրինակ)	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից	«01» նոյեմբեր, 2017թ.

Աշխատանքն ամբողջությամբ	սկիզբը	ավարտը
	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից	«01» դեկտեմբեր, 2017 թ.

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ մշակույթի նախարարություն
Հասցեն՝ 0010, ք. Երևան, Վազգեն Սարգսյան փող.3 Կառավարական տուն 2,
հեռ.՝ 58-51-96, 58-51-78
ՀՎՀՀ 08030202, հ/հ 900011012862
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչությունում

Ս. Մուրադյան
(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«Զանգակ-97» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երևան, Նոր-Նորքի 8-րդ զանգված, 30 շ., 39 բն,
հեռ.՝ 23-25-28,
ՀՎՀՀ 00830786, հ/հ 001-040013-001
«Էյչ-Էս-Բի-Սի Բանկ» ՓԲԸ

Ս. Մկրտչյան
(ստորագրություն)

Կ.Տ.

2-րդ չափաբաժին

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Աշխատանքի անվանումը՝ Հմայակ Բդեյան. «Ալբոմ»

NN	Աշխատանքի բնութագրի տարրերը	Նկարագրությունները
1	Գնվող աշխատանքի էության համառոտ շարադրանքը	Գիրք-ալբոմում տեղ կգտնեն Հմայակ Բդեյանի տարբեր տարիների ստեղծած թե՛ խեցեգործական և թե՛ դեկորատիվ կոթողային գործերը:
2	Աշխատանքի համար անհրաժեշտ չափորոշիչների նկարագրությունը	**Ընդհանուր բնութագրիչներ՝ այդ թվում** Չափը՝ 60x84 1/8 Միջուկի չափը 205x290 մմ (+ - 1 սմ) Ծավալը՝ 20.0 տպագր. մամուլ (160 էջ) Տպաքանակ՝ 300 օրինակ **Միջուկի թղթի բնութագրիչները՝ այդ թվում** Տեսակը՝ կավճապատ Կշիռը՝ 130 գ/ք.մ Ճերմակության առավելագույն չափը՝ ISO 2470/%D65 ստանդարտով (առավելագույնը՝ 96%) Անթափանցելիության նվազագույն չափը՝ 90% (ISO2471) **Տեքստի բնութագրիչներ՝** Բուն տեքստի տառաչափը՝ 9-11 Միջտողային հեռավորությունը 1.1-1.5 Օգտագործվող տառատեսակը՝ GHEA Narek Serif, Adobe Garamond Pro, Pragmatica Շապիկը՝ N 4 Տպագրության տեսակը՝ օֆսեթ: Պահպանել լուսանցքների համար ընդունված չափանիշները:
3	Աշխատանքի որակական ցուցանիշները՝ հիմնված ՀՀ կողմից սահմանված տեխնիկական և որակական բնութագրերի (ստանդարտների) վրա	Հրատարակության տպագրությունը պետք է լինի որակյալ, վրիպակներից զերծ և համապատասխանի ГОСТ 4.482-87, 7.4-95,7.53-01, ՀՍՏ 311-09 չափանիշներին, Հրատարակության 1 տպագրական մամուլում (միջին հաշվով) վրիպակների քանակը 3-ից ավելի լինելու դեպքում Պատվիրատուն իրավունք ունի հրաժարվել ընդունել այն:
4	Աշխատանքի հետ կապված այլ պահանջների և ընթացակարգերի հստակ նկարագրությունը	1. Աշխատանք կատարողը պատվիրատուին է ներկայացնում հրատարակության մակետը /ազդօրինակը/ 20.0 տպագրական մամուլ: 2. Հրատարակության անորակ օրինակները կատարողը վերահրատարակում է իր հաշվին՝ 10-օրյա ժամկետում:

Աշխատանքի կատարման ժամկետը

Աշխատանքի փուլը 1 մակետ (ազդօրինակ)	**սկիզբը**	**ավարտը**
	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից	**«01» նոյեմբեր, 2017թ.**
Աշխատանքն ամբողջությամբ	**սկիզբը**	**ավարտը**
	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից	**«01» դեկտեմբեր, 2017 թ.**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ մշակույթի նախարարություն
Հասցեն՝ 0010, ք. Երևան, Վազգեն Սարգսյան փող.3
Կառավարական տուն 2,
հեռ.՝ 58-81-86, 58-51-78
ՀՎՀՀ 08030202, հ/հ 900011012862
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչությունում

Ս. Մուրադյան
(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«Զանգակ-97» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երևան, Նոր-Նորքի 8-րդ զանգված,30 շ., 39 բն,
հեռ.՝ 23-25-28,
ՀՎՀՀ 00830786, հ/հ 001-040013-001
«Էյչ-Էս-Բի-Սի Բանկ» ՓԲԸ

Ս. Մկրտչյան
(ստորագրություն)

Կ.Տ.

3-րդ չափաբաժին

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Աշխատանքի անվանումը՝ Արթուր Ադամով. «Պիեսներ» (ֆրանսերենից)

NN	Աշխատանքի բնութագրի տարրերը	Նկարագրությունները
1	Գնվող աշխատանքի էության համառոտ շարադրանքը	Գրքում զետեղված են Ադամով դրամատուրգի ստեղծագործական ոճն ու կրած ներազդեցությունները բնորոշող հինգ պիեսների ֆրանսերենից հայերեն թարգմանությունները.
2	Աշխատանքի համար անհրաժեշտ չափորոշիչների նկարագրությունը	**Ընդհանուր բնութագրիչներ՝ այդ թվում** Չափը՝ 70x100 1/16 Միջուկի չափը 170x240 մմ (+ - 1 սմ) Ծավալը՝ 30.0 տպագր. մամուլ (480 էջ) Տպաքանակ՝ 200 օրինակ **Միջուկի թղթի բնութագրիչները՝ այդ թվում** Տեսակը՝ օֆսեթ Կշիռը՝ 70 գ/ք.մ Ճերմակության առավելագույն չափը՝ ISO 2470/%D65 ստանդարտով (առավելագույնը՝ 96%) Անթափանցելիության նվազագույն չափը՝ 90% (ISO2471) **Տեքստի բնութագրիչներ՝** Բուն տեքստի տառաչափը՝ 9-11 Միջտողային հեռավորությունը 1.1-1.5 Օգտագործվող տառատեսակը՝ Պարմանի, Մաշտոց Շապիկը՝ N 4 Տպագրության տեսակը՝ օֆսեթ: Պահպանել լուսանցքների համար ընդունված չափանիշները:
3	Աշխատանքի որակական ցուցանիշները՝ հիմնված ՀՀ կողմից սահմանված տեխնիկական և որակական բնութագրերի (ստանդարտների) վրա	Հրատարակության տպագրությունը պետք է լինի որակյալ, վրիպակներից զերծ և համապատասխանի ГОСТ 4.482-87, 7.4-95,7.53-01, ՀՍՏ 311-09 չափանիշներին, Հրատարակության 1 տպագրական մամուլում (միջին հաշվով) վրիպակների քանակը 3-ից ավելի լինելու դեպքում Պատվիրատուն իրավունք ունի հրաժարվել ընդունել այն:
4	Աշխատանքի հետ կապված այլ պահանջների և ընթացակարգերի հստակ նկարագրությունը	1. Աշխատանք կատարողը պատվիրատուին է ներկայացնում հրատարակության մակետը /ազդօրինակը/ 30.0 տպագրական մամուլ: 2. Հրատարակության անորակ օրինակները կատարողը վերահրատարակում է իր հաշվին՝ 10-օրյա ժամկետում:

Աշխատանքի կատարման ժամկետը

	սկիզբը	ավարտը
Աշխատանքի փուլը 1 մակետ (ազդօրինակ)	**Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից**	**«01» նոյեմբեր, 2017թ.**
Աշխատանքն ամբողջությամբ	**սկիզբը**	**ավարտը**
	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից	**«01» դեկտեմբեր, 2017 թ.**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ մշակույթի նախարարություն
Հասցեն՝ 0010, ք. Երևան, Վազգեն Սարգսյան փող.3
Կառավարական տուն 2,
հեռ.՝ 58-51-96, 58-51-78
ՀՎՀՀ 08030202, հ/հ 900011012862
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչությունում

_____ Ս. Մուրադյան
(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«Հանգակ-97» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երևան, Նոր-Նորքի 8-րդ զանգված,30 շ., 39 բն,
հեռ.՝ 23-25-28,
ՀՎՀՀ 00830786, հ/հ 001-040013-001
«Էյչ-Էս-Բի-Սի Բանկ» ՓԲԸ

_____ Ս. Մկրտչյան
(ստորագրություն)

Կ.Տ.

ՀԱՎԵԼՎԱԾ N 2

«27» «03» 2017թ. կնքված

N «ՀՀՄՆ-ԲՀԱՀԱՇՁԲ-17/15» ծածկագրով գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

N	Աշխատանքի անվանումը	Ծավալը (տպագրական մամուլ)	Տպաքանակը (օրինակ)	Տպագրվող մեկ օրինակի գինը	Նախատեսվում է ֆինանսավորել 2017թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում										Ընդամենը տարի
					մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	
1.	Հուբեն Գալյան. Ադրբեջանական պատմաաշխարհագրական եղծարարությունները»	14.0	400 օրինակ	4663	186500	1119000	1119000	1119000	1865000	1865000	1865000	1865000	1865000	1865000	1865000
2.	Հմայակ Բդեյան. «Ալբոմ»	20,0	300 օրինակ	5333	160000	960000	960000	960000	1600000	1600000	1600000	1600000	1600000	1600000	1600000
3	Արթուր Ադամով. «Պիեսներ» (ֆրանսերենից)	30,0	200 օրինակ	14000	280000	1680000	1680000	1680000	2800000	2800000	2800000	2800000	2800000	2800000	2800000

ընդամենը				626500	3759000	3759000	3759000	6265000	6265000	6265000	6265000	6265000	6265000	6265000

**Վճարման ենթակա գումարները ներկայացված են առողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ մշակույթի նախարարություն
Հասցեն՝ 0010, ք. Երևան, Վազգեն Սարգսյան փող.3
Կառավարական տուն 2,
հեռ.՝ 58-51-96, 58-51-78
ՀՎՀՀ 08030202, h/h 900011012862
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի
գործառնական վարչությունում

Ս. Մուրադյան
(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«Զանգակ-97» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երևան, Նոր-Նորքի 8-րդ
զանգված,30 շ., 39 բն,
հեռ.՝ 23-25-28,
ՀՎՀՀ 00830786, h/h 001-040013-001
«Էյչ-Էս-Բի-Սի Բանկ» ՓԲԸ

Ս. Մկրտչյան
(ստորագրություն)

ՀԱՎԵԼՎԱԾ N 3

«25» «03» 2017թ. կնքված

N «ՀՀՄՆ-ԲԸԱՀԱՇՁԲ-17/15» ծածկագրով գնման պայմանագրի

ԿԱՏԱՐՈՂ	ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
«Զանգակ-97» ՍՊԸ Հասցեն՝ ք. Երևան, Նոր-Նորքի 8-րդ զանգված, 30 շ., 39 բն, հեռ.՝ 23-25-28, ՀՎՀՀ 00830786, հ/հ 001-040013-001 «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ» ՓԲԸ	ՀՀ մշակույթի նախարարություն Հասցեն՝ 0010, ք. Երևան, Վազգեն Սարգսյան փող.3 Կառավարական տուն 2, հեռ.՝ 58-51-96, 58-51-78 ՀՎՀՀ 08030202, հ/հ 900011012862 ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչությունում

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 2017թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ Հրատարակման աշխատանքների կատարման պետական գնման

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ « » « » 2017 թ.

Պայմանագրի համարը՝ ՀՀՄՆ-ԲԸԱՀԱՇՁԲ-17/15 Պատվիրատուն՝ ի դեմս Պատասխանատու ստորաբաժանման ղեկավար՝ Ա. Ավանեսյանի և Կատարողը՝ «Զանգակ-97» ՍՊԸ , ի դեմս կազմակերպության կանոնադրության հիման վրա գործող Տնօրեն՝ Ս. Մկրտչյանի, հիմք ընդունելով, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված աշխատանքները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Կատարողը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		
1								
	ընդամենը							

Վերոհիշյալ աշխատանքների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
ստորագրություն	ստորագրություն
ազգանուն, անուն	ազգանուն, անուն

ՀԱՎԵԼՎԱԾ N 3.1

«21» «03» 2017թ. կնքված

N «ՀՀՄՆ-ԲԸԱՀԱՇՁԲ-17/28» ծածկագրով գնման պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ՀՀ մշակույթի նախարարության (այսուհետ՝ Պատվիրատու) և «Արևիկ» հրատարակչություն ՓԲԸ-ի, (այսուհետ՝ Կատարող) միջև 2017թ. կնքված N ՀՀՄՆ-ԲԸԱՀԱՇՁԲ-17/15 գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 2017թ. հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
Անվանումը	**Քանակական ցուցանիշը (փաստացի)**	**Չափի միավորը**

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց	Ընդունեց հայտը նախագծած ներկայացուցիչ՝
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
ստորագրություն	ստորագրություն

«Գրքի և հրատարակչական գործի կենտրոն» ՊՈԱԿ

Տնօրենի պաշտոնակատար՝ Վ. Սարգսյան

ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N #05/12/16

ք. Երևան «05» դեկտեմբերի, 2016 թ.

«Զանգակ-97» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը՝ ի դեմս գործադիր տնօրեն Էմին Մկրտչյանի (անձնագիր՝ AM0868868, տրված 19.09.2012 թ., 001-ի կողմից), (այսուհետ՝ Ձեռքբերող)՝ մի կողմից, և Ռուբեն Գալիչյանը (անձնագիր՝ BA 0644869, տրվ. 09.06.2014, 099-ի կողմից), (այսուհետ՝ Հեղինակ)՝ մյուս կողմից (Ձեռքբերողը և Հեղինակը միասին այսուհետ՝ Կողմեր), կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Հեղինակը սույն պայմանագրով Ձեռքբերողին տրամադրում է իր հեղինակած «Ադրբեջանական պատմաաշխարհագրական գեղծարարությունները» գրքի (այսուհետ Ստեղծագործություն) բառացի օգտագործման իրավունք (լիցենզիա)՝ տրամադրելով պայմանագրի 1.3. կետով սահմանված գույքային իրավունքները (այսուհետ՝ Գույքային իրավունքներ):

1.2. Ձեռքբերողը սույն պայմանագրով սահմանված կարգով՝
1.2.1. ընդունում է իրեն փոխանցվող Գույքային իրավունքները:
1.2.2. վճարում է իրեն փոխանցված Գույքային իրավունքների դիմաց:

1.3. Սույն պայմանագրով Հեղինակը Ձեռքբերողին տրամադրում է հետևյալ իրավունքները

- ստեղծագործության վերարտադրումը (վերարտադրման իրավունք).
- ստեղծագործության տարածումը (տարածման իրավունք).
- ստեղծագործության բնօրինակը կամ օրինակները վարձույթով տալը (վարձույթով տալու իրավունք).
- ստեղծագործության բնօրինակի կամ օրինակների փոխատվությունը (փոխատվության իրավունք).
- ստեղծագործության թարգմանումը (թարգմանության իրավունք).
- ստեղծագործության վերամշակումը, վերադասակումը, նկարազարդումը, հարմարեցումը և այլ ձևերով վերափոխումը (վերափոխման իրավունք).
- ստեղծագործության հաղորդումը հանրությանը (հանրությանը հաղորդման իրավունք).
- ստեղծագործության հրապարակային ցուցադրումը (հրապարակային ցուցադրման իրավունք).
- Սույն պայմանագրով սահմանված նպատակով Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը չհակասող այլ ձևերով ու եղանակներով օգտագործում.

1.4. Իրավունքները տրամադրվում են Զեռքբերողի կողմից զիրք հրատարակելու նպատակով.

2. Պայմանագրի ընդհանուր դրույթները

2.1. Հեղինակը երաշխավորում է, որ Ստեղծագործության բովանդակությունը կազմող նյութերը չեն ոտնահարում երրորդ անձանց գույքային կամ այլ իրավունքներ: Հեղինակը պարտավորվում է զերծ պահել Զեռքբերողին Ստեղծագործության հետ կապված երրորդ անձանց ցանկացած պահանջներից, իսկ նման պահանջների դեպքում պարտավորվում է հատուցել նման պահանջների հետևանքով Զեռքբերողի կրած վնասները ու կատարած ծախսերը:

2.2. Բացառիկ գույքային իրավունքները տրամադրվում են Զեռքբերողին 5 (հինգ) տարի ժամկետով:

2.3. Սույն պայմանագրի 1.1 կետով փոխանցված իրավունքների գործողության տարածքը ներառում է աշխարհի բոլոր պետությունները:

2.4. Սույն պայմանագրի համաձայն տրվող լիցենզիայի և հեղինակային վարձատրության դիմաց Զեռքբերողի կողմից հրատարակվող ստեղծագործության առավելագույն տպաքանակը սահմանվում է 1000 օրինակ:

2.5. Հրատարակչությունը կարող է սույն պայմանագրով իրեն փոխանցված իրավունքները լրիվ կամ մասնակիորեն փոխանցել այլ անձանց՝ առանց Հեղինակի որևէ լրացուցիչ վարձատրության:

3. Պայմանագրի գինը և վճարման կարգը

3.1. Սույն պայմանագրի գինը կազմում է 507 500 (հինգ հարյուր յոթ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ՝ ներառյալ ՀՀ օրենսդրությամբ սահմանված հարկերը:

3.2. Զեռքբերողը պարտավորվում է սույն պայմանագրի 3.1 կետով սահմանված գինը վճարել մինչև 2017 թ. դեկտեմբերի 30-ը:

3.3. Սույն պայմանագրի շրջանակներում բոլոր վճարումներն իրականացվում են կանխիկ կամ փոխանցումով:

3.4. Կողմերը հաստատում են, որ սույն պայմանագրի 3.1. կետում նշված վարձատրությունը ներառում է հանդիսանում է լիցենզիայի դիմաց միանվագ վարձատրություն և Հեղինակը հրաժարվում է Ստեղծագործության հետ կապված լիցենզիայի գործողության ընթացքում որևէ վճարման պահանջներից՝ հաստատելով, որ բացի սույն կետում նշված վարձատրությունից որևէ այլ պահանջ չունի Զեռքբերողի նկատմամբ:

4. Կողմերի իրավունքներն ու պարտականությունները

4.1. Ձեռքբերողն իրավունք ունի.

4.1.1. Օգտագործել Ստեղծագործությունը սույն պայմանագրով սահմանված կարգով:

4.2. Ձեռքբերողը պարտավորվում է.

4.2.1. Հարգել Ստեղծագործության նկատմամբ Հեղինակի հեղինակության իրավունքը, զերծ պահել Ստեղծագործությունն աղավաղումներից և Հեղինակի համբավին կամ արժանապատվությանը վնաս հասցնող այլ ոտնձգություններից:

4.2 2. Հրատարակված գրքից հեղինակին հանձնել 30 օրինակ:

4.3. Հեղինակը իրավունք ունի.

4.3.1. Հրապարակայնորեն ներկայանալու որպես Ստեղծագործության հեղինակ:

4.3.2. Լուսաբանման նպատակով Ստեղծագործությունն ընդգրկելու իր հեղինակած այլ Ստեղծագործությունների ժողովածուներում:

4.4. Հեղինակը պարտավորվում է.

4.4.1. Ոչ մի դեպքում չօգտագործել Ստեղծագործությունն ամբողջությամբ կամ Ստեղծագործության էական նշանակություն ունեցող որևէ հատված Ձեռքբերողի շահերին չհամապատասխանող կարգով:

5. Կողմերի պատասխանատվությունը

5.1. Կողմերն իրականացնում են Ստեղծագործության հեղինակային իրավունքների պաշտպանությունը ՀՀ միջազգային պայմանագրերի և օրենսդրության համապատասխան.

5.2. Կողմերը պարտավորվում են անհապաղ հայտնել միմյանց և հեղինակային իրավունքի պաշտպանությունն իրականացնող պետական մարմիններին Ստեղծագործության անօրինական օգտագործման՝ իրենց հայտնի դարձած դեպքերի մասին:

6. Եզրափակիչ դրույթներ

6.1. Սույն պայմանագիրն իրավական ուժ է ստանում Կողմերի ստորագրման պահից:

6.2. Սույն պայմանագիրը բաղկացած է 4 էջից և կազմված է 2 օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ:

6.3. Պայմանագրի մեկական օրինակ պահվում է կողմերից յուրաքանչյուրի մոտ:

6.4. Սույն պայմանագրի փոփոխությունները և լրացումները վավեր են, եթե կազմված են մեկ միասնական փաստաթղթի տեսքով, ստորագրված են Կողմերի կամ նրանց լիազոր ներկայացուցիչների կողմից և հաստատված են Կողմերի կնիքներով (առկայության դեպքում):

6.5. Սույն պայմանագրի փոփոխություններն ու լրացումները, սույն պայմանագրի շրջանակներում Կողմերի միջև կնքված լրացուցիչ համաձայնագրերը կցվում են սույն պայմանագրին և հանդիսանում են նրա բաղկացուցիչ մասը:

6.6. Սույն պայմանագրի շուրջ ծագած վեճերը լուծվում են Կողմերի անմիջական բանակցությունների միջոցով, իսկ համաձայնության չգալու դեպքում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7. Բոլոր այն հարցերը, որոնք չեն կարգավորվում սույն պայմանագրով, ենթակա են կարգավորման ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Պատվիրատու	Հանձնակատար
«Գանգակ-97» ՍՊԸ	Ռուբեն Գալիչյան
Հասցե՝ ՀՀ, 0051, ք. Երևան, Կոմիտասի պող. 49/2	Անձնագիր՝ ԲԱ 0644869, տրվ.՝ 09.06.2014, 099-ի կողմից,
Հեռ.՝ (37410) 232528	Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0002, Աշտարակի պող. 34, բն. 4:
ՀՎՀՀ՝ 00830786	
Բանկ՝ «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ	
Հ/հ՝ 217 001-040013-001	
_____ Ն. Մելքոնյան	_____ Ռ. Գալիչյան

ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՓՈԽԱՆՑՄԱՆ

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N #17/08/16

ք. Երևան «17» օգոստոսի, 2016 թ.

«Զանգակ-97» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը՝ ի դեմս գլխավոր տնօրեն Սոկրատ Մկրտչյանի (այսուհետ՝ Ձեռքբերող)՝ մի կողմից, և Հմայակ Բդեյանը (անձնագիր՝ AM 0747818, տրվ.՝ 30.05.2012 թ., 011-ի կողմից) (այսուհետ՝ Հեղինակ)՝ մյուս կողմից (Ձեռքբերողը և Հեղինակը միասին այսուհետ՝ Կողմեր), կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Հեղինակը սույն պայմանագրով Ձեռքբերողին փոխանցում է իր ստեղծած խեցեգործական և դեկորատիվ աշխատանքների մաս կազմող նյութերի (այսուհետ՝ Ստեղծագործություն) նկատմամբ «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքով (այսուհետ՝ Օրենք) նախատեսված՝ իր՝ որպես հեղինակի բացառիկ գույքային իրավունքները (այսուհետ՝ Գույքային իրավունքներ)՝ «Հմայակ Բդեյան. Ալբոմ» գրքի կազմման և հրատարկման նպատակով:

1.2. Ձեռքբերողը սույն պայմանագրով սահմանված կարգով՝

1.2.1. ընդունում է իրեն փոխանցվող Գույքային իրավունքները:

1.2.2. վճարում է իրեն փոխանցված Գույքային իրավունքների դիմաց:

2. Պայմանագրի ընդհանուր դրույթները

2.1. Հեղինակը երաշխավորում է, որ Ստեղծագործության բովանդակությունը կազմող նյութերը չեն ոտնահարում երրորդ անձանց գույքային կամ այլ իրավունքներ: Հեղինակը պարտավորվում է զերծ պահել Ձեռքբերողին Ստեղծագործության հետ կապված երրորդ անձանց ցանկացած պահանջներից, իսկ նման պահանջների դեպքում պարտավորվում է հատուցել նման պահանջների հետևանքով Ձեռքբերողի կրած վնասները ու կատարած ծախսերը:

2.2. Բացառիկ գույքային իրավունքները տրամադրվում են Ձեռքբերողին՝ պայմանագրի կնքման պահից՝ 3 (երեք) տարի ժամկետով:

2.3. Սույն պայմանագրի 1.1 կետով փոխանցված իրավունքների գործողության տարածքը ներառում է աշխարհի բոլոր պետությունները:

3. Պայմանագրի գինը և վճարման կարգը

3.1. Սույն պայմանագրի գինը կազմում է 10 000 (տասը հազար) ՀՀ դրամ՝ ներառյալ ՀՀ օրենսդրությամբ սահմանված հարկերը:

3.2. Ձեռքբերողը պարտավորվում է սույն պայմանագրի 3.1 կետով սահմանված գինը վճարել մինչև 2017 թ. հունիսի 30-ը:

3.3. Սույն պայմանագրի շրջանակներում բոլոր վճարումներն իրականացվում են կանխիկ կամ փոխանցումով:

3.4. Կողմերը հաստատում են , որ սույն պայմանագրի 3.1. կետում նշված վարձատրությունը ներառում է Ստեղծագործությունը օրենքով սահմանված բոլոր ձևերով և եղանակներով օգտագործելու, դրա նկատմամբ բոլոր գույքային իրավունքները փոխանցելու (օտարելու) դիմաց միանվագ վարձատրություն և Հեղինակը հրաժարվում է Ստեղծագործության հետ կապված ապագայում որևէ վճարման պահանջներից՝ հաստատելով, որ բացի սույն կետում նշված վարձատրությունից որևէ այլ պահանջ չունի Ձեռքբերողի նկատմամբ:

4. Կողմերի իրավունքներն ու պարտականությունները

4.1. Ձեռքբերողն իրավունք ունի.

4.1.1. Սույն պայմանագրի 1.1 կետով իրեն փոխանցված իրավունքները սույն պայմանագրի գործողության ընթացքում տնօրինելու, տիրապետելու, օգտագործելու, ինչպես նաև իր հայեցողությամբ և իր նախընտրած պայմաններով Օրենքով սահմանված կարգով

- փոխանցելու երրորդ անձի,
- վերարտադրելու Ստեղծագործությունը,
- տարածելու Ստեղծագործությունը,
- Ստեղծագործության բնօրինակը կամ օրինակները տալու վարձույթով,
- Ստեղծագործությունը թարգմանելու, վերամշակելու, վերադասավորելու, նկարագրելու, լուսանկարելու, հարմարեցնելու այլ կրիչների և այլ ձևերով վերափոխելու ու օգտագործելու,
- թույլատրելու Ստեղծագործության հաղորդումը հանրությանը,
- օգտագործելու Ստեղծագործությունը ՀՀ օրենսդրությանը չհակասող այլ ձևերով ու եղանակներով:

4.2. Ձեռքբերողը պարտավորվում է.

4.2.1. Հարգել Ստեղծագործության նկատմամբ Հեղինակի հեղինակության իրավունքը, զերծ պահել Ստեղծագործությունն աղավաղումներից և Հեղինակի համբավին կամ արժանապատվությանը վնաս հասցնող այլ ոտնձգություններից:

4.2.2. Հարգել Հեղինակի հետկանչի իրավունքը և հետկանչի պատճառով Ձեռքբերողի կրած բոլոր վնասները՝ ներառյալ ակնկալվող եկամուտը, Հեղինակի կողմից փոխհատուցելու դեպքում Ստեղծագործության օրինակները հանել շրջանառությունից:

4.3. Հեղինակը իրավունք ունի.

4.3.1. Հրապարակայնորեն ներկայանալու որպես Ստեղծագործության հեղինակ:

4.3.2. Լուսաբանման նպատակով Ստեղծագործությունն ընդգրկելու իր հեղինակած այլ Ստեղծագործությունների ժողովածուներում:

4.3.3. Սույն պայմանագրի գործողության ընթացքում որևէ եղանակով չօգտագործել, այդ թվում երրորդ անձանց չթույլատրել օգտագործել Ստեղծագործությունը և/կամ Սցենարը, բացառությամբ սույն պայմանագրի 4.3.2 կետով սահմանված դեպքի:

4.4. Հեղինակը պարտավորվում է.

4.4.1. Ոչ մի դեպքում չօգտագործել Ստեղծագործությունն ամբողջությամբ կամ Ստեղծագործության էական նշանակություն ունեցող որևէ հատված Ձեռքբերողի շահերին չհամապատասխանող կարգով:

4.4.2. Ստեղծագործության հետկանչի՝ իր՝ Օրենքով սահմանված իրավունքից օգտվելու դեպքում փոխհատուցել Ձեռքբերողի բոլոր վնասները՝ ներառյալ ակնկալվող եկամուտը:

5. Կողմերի պատասխանատվությունը

5.1. Կողմերն իրականացնում են Ստեղծագործության հեղինակային իրավունքների պաշտպանությունը ՀՀ միջազգային պայմանագրերի և օրենսդրության համապատասխան:

5.2. Կողմերը պարտավորվում են անհապաղ հայտնել միմյանց և հեղինակային իրավունքի պաշտպանությունն իրականացնող պետական մարմիններին Ստեղծագործության անօրինական օգտագործման՝ իրենց հայտնի դարձած դեպքերի մասին:

6. Եզրափակիչ դրույթներ

6.1. Սույն պայմանագիրն իրավական ուժ է ստանում Կողմերի ստորագրման պահից:

6.2. Սույն պայմանագիրը բաղկացած է 4 էջից և կազմված է 2 օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ:

6.3. Պայմանագրի մեկական օրինակ պահվում է կողմերից յուրաքանչյուրի մոտ:

6.4. Սույն պայմանագրի փոփոխությունները և լրացումները վավեր են, եթե կազմված են մեկ միասնական փաստաթղթի տեսքով, ստորագրված են Կողմերի կամ նրանց լիազոր ներկայացուցիչների կողմից և հաստատված են Կողմերի կնիքներով (առկայության դեպքում):

6.5. Սույն պայմանագրի փոփոխություններն ու լրացումները, սույն պայմանագրի շրջանակներում Կողմերի միջև կնքված լրացուցիչ համաձայնագրերը կցվում են սույն պայմանագրին և հանդիսանում են նրա բաղկացուցիչ մասը:

6.6. Սույն պայմանագրի շուրջ ծագած վեճերը լուծվում են Կողմերի անմիջական բանակցությունների միջոցով, իսկ համաձայնության չգալու դեպքում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7. Բոլոր այն հարցերը, որոնք չեն կարգավորվում սույն պայմանագրով, ենթակա են կարգավորման ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Գնորդ	**Հեղինակ**
«Գանգակ-97» ՍՊԸ	Հմայակ Բդեյան
Հասցե՝ ՀՀ, 0051, Երևան, Կոմիտասի 49/2	Անձնագիր՝ AM 0747818, տրվ.՝ 30.05.2012 թ., 011-ի կողմից
Հեռ.՝ (37410) 232528	Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Դեմիրճյան 31, բն. 39:
ՀՎՀՀ՝ 00830786	
Բանկ՝ «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ	
Հ/հ՝ 217-001-040013-001	

Մ. Մկրտչյան

Հ. Բդեյան

ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N #06/10/16

ք. Երևան «06» հոկտեմբերի, 2016 թ.

«Զանգակ-97» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը՝ ի դեմս գործադիր տնօրեն Էմին Մկրտչյանի (անձնագիր՝ AM0868868, տրվ.՝ 19.09.2012թ., 001-ի կողմից), (այսուհետ՝ Զեռքբերող)՝ մի կողմից, և Սաթենիկ Խաչատրյանը (անձնագիր՝ AM 0411995, տրվ.՝ 09.08.2011 թ., 010-ի կողմից), (այսուհետ՝ Հեղինակ)՝ մյուս կողմից (Զեռքբերողը և Հեղինակը միասին այսուհետ՝ Կողմեր), կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Հեղինակը սույն պայմանագրով Զեռքբերողին տրամադրում է Արթուր Ադամովի «Պիեսներ» գրքի ֆրանսերենից հայերեն թարգմանության (այսուհետ՝ Ստեղծագործություն) բառացիկ օգտագործման իրավունք (լիցենզիա)՝ տրամադրելով պայմանագրի 1.3. կետով սահմանված գույքային իրավունքները (այսուհետ՝ Գույքային իրավունքներ)·

1.2. Զեռքբերողը սույն պայմանագրով սահմանված կարգով՝
1.2.1. ընդունում է իրեն փոխանցվող Գույքային իրավունքները:
1.2.2. վճարում է իրեն փոխանցված Գույքային իրավունքների դիմաց:

1.3. Սույն պայմանագրով Հեղինակը Զեռքբերողին տրամադրում է հետևյալ իրավունքները.

- ստեղծագործության վերարտադրումը (վերարտադրման իրավունք).
- ստեղծագործության տարածումը (տարածման իրավունք).
- ստեղծագործության բնօրինակը կամ օրինակները վարձույթով տալը (վարձույթով տալու իրավունք).
- ստեղծագործության բնօրինակի կամ օրինակների փոխատվությունը (փոխատվության իրավունք).
- ստեղծագործության թարգմանումը (թարգմանության իրավունք).
- ստեղծագործության վերամշակումը, վերադասակումը, նկարազարդումը, հարմարեցումը և այլ ձևերով վերափոխումը (վերափոխման իրավունք).
- ստեղծագործության հաղորդումը հանրությանը (հանրությանը հաղորդման իրավունք).
- ստեղծագործության հրապարակային ցուցադրումը (հրապարակային ցուցադրման իրավունք).
- Սույն պայմանագրով սահմանված նպատակով Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը չհակասող այլ ձևերով ու եղանակներով օգտագործում.

1.4. Իրավունքները տրամադրվում են Զեռքբերողի կողմից գիրք հրատարակելու նպատակով:

2. Պայմանագրի ընդհանուր դրույթները

2.1. Հեղինակը երաշխավորում է, որ Ստեղծագործության բովանդակությունը կազմող նյութերը չեն ոտնահարում երրորդ անձանց գույքային կամ այլ իրավունքներ: Հեղինակը պարտավորվում է զերծ պահել Ձեռքբերողին Ստեղծագործության հետ կապված երրորդ անձանց ցանկացած պահանջներից, իսկ նման պահանջների դեպքում պարտավորվում է հատուցել նման պահանջների հետևանքով Ձեռքբերողի կրած վնասները ու կատարած ծախսերը:

2.2. Բացառիկ գույքային իրավունքները տրամադրվում են Ձեռքբերողին 10 (տասը) տարի ժամկետով:

2.3. Սույն պայմանագրի 1.1 կետով փոխանցված իրավունքների գործողության տարածքը ներառում է աշխարհի բոլոր պետությունները:

2.4. Սույն պայմանագրի համաձայն տրվող լիցենզիայի և հեղինակային վարձատրության դիմաց Ձեռքբերողի կողմից հրատարակվող ստեղծագործության առավելագույն տպաքանակը սահմանվում է 2000 օրինակ:

2.5. Հրատարակչությունը կարող է սույն պայմանագրով իրեն փոխանցված իրավունքները լրիվ կամ մասնակիորեն փոխանցել այլ անձանց՝ առանց Հեղինակի որևէ լրացուցիչ վարձատրության:

3. Պայմանագրի գինը և վճարման կարգը

3.1. Սույն պայմանագրի գինը կազմում է 997 000 (ինը հարյուր իննսունյոթ հազար) ՀՀ դրամ՝ ներառյալ ՀՀ օրենսդրությամբ սահմանված հարկերը:

3.2. Ձեռքբերողը պարտավորվում է սույն պայմանագրի 3.1 կետով սահմանված գինը վճարել մինչև 2017 թ. դեկտեմբերի 30-ը:

3.3. Սույն պայմանագրի շրջանակներում բոլոր վճարումներն իրականացվում են կանխիկ կամ փոխանցումով:

3.4. Կողմերը հաստատում են, որ սույն պայմանագրի 3.1. կետում նշված վարձատրությունը ներառում է հանդիսանում է լիցենզիայի դիմաց միանվագ վարձատրություն և Հեղինակը հրաժարվում է Ստեղծագործության հետ կապված լիցենզիայի գործողության ընթացքում որևէ վճարման պահանջներից՝ հաստատելով, որ բացի սույն կետում նշված վարձատրությունից որևէ այլ պահանջ չունի Ձեռքբերողի նկատմամբ:

4. Կողմերի իրավունքներն ու պարտականությունները

4.1. Զեղջբերողն իրավունք ունի.

4.1.1. Օգտագործել Ստեղծագործությունը սույն պայմանագրով սահմանված կարգով:

4.2. Զեղջբերողը պարտավորվում է.

4.2.1. Հարգել Ստեղծագործության նկատմամբ Հեղինակի հեղինակության իրավունքը, զերծ պահել Ստեղծագործությունն աղավաղումներից և Հեղինակի համբավին կամ արժանապատվությանը վնաս հասցնող այլ ոտնձգություններից:

4.3. Հեղինակը իրավունք ունի.

4.3.1. Հրապարակայնորեն ներկայանալու որպես Ստեղծագործության հեղինակ:

4.3.2. Լուսաբանման նպատակով Ստեղծագործությունն ընդգրկելու իր հեղինակած այլ Ստեղծագործությունների ժողովածուներում:

4.4. Հեղինակը պարտավորվում է.

4.4.1. Ոչ մի դեպքում չօգտագործել Ստեղծագործությունն ամբողջությամբ կամ Ստեղծագործության էական նշանակություն ունեցող որևէ հատված Զեղջբերողի շահերին չհամապատասխանող կարգով:

5. Կողմերի պատասխանատվությունը

5.1. Կողմերն իրականացնում են Ստեղծագործության հեղինակային իրավունքների պաշտպանությունը ՀՀ միջազգային պայմանագրերի և օրենսդրության համապատասխան:

5.2. Կողմերը պարտավորվում են անհապաղ հայտնել միմյանց և հեղինակային իրավունքի պաշտպանությունն իրականացնող պետական մարմիններին Ստեղծագործության անօրինական օգտագործման՝ իրենց հայտնի դարձած դեպքերի մասին:

6. Եզրափակիչ դրույթներ

6.1. Սույն պայմանագիրն իրավական ուժ է ստանում Կողմերի ստորագրման պահից:

6.2. Սույն պայմանագիրը բաղկացած է 4 էջից և կազմված է 2 օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ:

6.3. Պայմանագրի մեկական օրինակ պահվում է կողմերից յուրաքանչյուրի մոտ:

6.4 Սույն պայմանագրի փոփոխությունները և լրացումները վավեր են եթե կազմված են մեկ միասնական փաստաթղթի տեսքով, ստորագրված են Կողմերի կամ նրանց լիազոր ներկայացուցիչների կողմից և հաստատված են Կողմերի կնիքներով (առկայության դեպքում)

6.5 Սույն պայմանագրի փոփոխություններն ու լրացումները, սույն պայմանագրի հոդվածներում Կողմերի միջև կնքված լրացուցիչ համաձայնագրերը կցվում են սույն պայմանագրին և հանդիսանում են նրա բաղկացուցիչ մասը:

6.6 Սույն պայմանագրի շուրջ ծագած վեճերը լուծվում են Կողմերի անմիջական բանակցությունների միջոցով, իսկ համաձայնության չգալու դեպքում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով

6.7 Բոլոր այն հարցերը, որոնք չեն կարգավորվում սույն պայմանագրով, ենթակա են կարգավորման ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով

7. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Գործընկեր	Հեղինակ
«Զանգակ-97» ՍՊԸ	Սաթենիկ Խաչատրյան
Հասցե՝ ՀՀ, 0051, ք. Երևան, Կոմիտասի պող. 49/2	Անձնագիր՝ AM 0411995, տրվ.՝ 09.08.2011 թ. 010-ի կողմից
Հեռ.՝ (37410) 232528	Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Չարենցի 10, բն. 18
Հ/Հ՝ 00830786	
Բանկ՝ «Իդ Էս Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ	
Հ/Հ՝ 217 001-040013-001	
Ի. Մկրտչյան	Ս. Խաչատրյան